



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱհՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

20 դեկտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալյանի

Զննության առնելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անհափական դիմումի
ընդունելիության հարցը,

ՊԱՐՁԵՅ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 42.1-րդ հոդվածի՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն 2013թ. դեկտեմբերի 5-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «դիմողի նկարմամբ կիրառված «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերը դադարաների իրավակիրառ պրակտիկայով դրանց փրկած մեկնաբանությամբ ճանաչել մասամբ Սահմանադրության 18-րդ հոդվածին (արդյունքում նաեւ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներին) հակասող և անվավեր»:

Սույն անհափական դիմումի նախնական ուսումնափրությունը ցույց փական է:

1. Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթներին իրավակիրառական պրակտիկայում փրկած մեկնաբանությամբ սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 18-րդ հոդվածով ամրագրված իրավունքների և ազարությունների ապահովման և պաշտպանության, ազար իրականացման հնարավորությունը:

2. Դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը չի ներկայացրել պարշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչդեռ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհագական դիմումի ընդունելիության պարբադիր պայման, սահմանում է, որ դիմումը պեսք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համարեքագում ՀՀ սահմանադրական դադարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արդահայփել առ այն, որ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պեսք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հագեցանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքներն են խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փասփի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջեւ պարճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դադարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արդահայփած իրավական դիրքորոշման՝ անհագական դիմումն ակնհայփ անհիմն համարելու հիմք է:

3. Դադարական կազմը գրնում է նաև, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետեւանքները նրա նկարմամբ կայացված համապարասխան դադարական ակտերի արդյունք են, հետեւաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն, դիմողը վերոհիշյալ դրույթների սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում են դրանց կիրառման իրավաչափության հարց, որն էլ, համաձայն ՀՀ սահմանադրական դադարանի՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ արդահայփած իրավական դիրքորոշման, համաձայն որի՝ քոլոր այն դեպքերում, եթե դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի

դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, հանդիսանում է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախագիծաված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 2 դադարական կազմը

ՈՐՈՇԵՅ.

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի անհադական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

20 դեկտեմբերի 2013 թվականի
ՍԴԿՈ/2-33